Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հուլիսի 8-ի N 428 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակի, Լուսաձորի, Դիտավանի, Ակնաղբյուրի և Այգեձորի համայնքների բնակիչների և մանկապարտեզների համար թվով 76 հատ (74 բնակիչների համար, 2 հատ մանկապարտեզների համար) արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ (ԱՋՏ) համակարգերի և վերոնշված համայնքների 6 դպրոցներում, 1 մանկապարտեզում և 5 համայնքային կենտրոններում (ընդհանուր 12 հատ) արևային ֆոտովոլտային (ON GRID) կայանների տեղադրման աշխատանքները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 45.710.203,00 դրամ, որից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակի, Լուսաձորի, Դիտավանի, Ակնաղբյուրի և Այգեձորի համայնքների բնակիչների և մանկապարտեզների համար արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքա-ցուցիչ (ԱՋՏ) համակարգերի տեղադրում՝ 26.246.219,00 դրամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակի, Լուսաձորի, Դիտավանի, Ակնաղբյուրի և Այգեձորի համայնքների դպրոցներում, մանկապարտեզներում և համայնքային կենտրոններում արևային ֆոտովոլտային (ON GRID) կայանների տեղադրում՝ 19.463.984,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակի, Լուսաձորի, Դիտավանի, Ակնաղբյուրի և Այգեձորի համայնքների բնակիչներ, մանկապարտեզներ, դպրոցներ և համայնքային կենտրոններ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսում է իրականացնել արևային ֆոտովոլտային (ON GRID) կայանների տեղադրում՝ 2019 թ. հունիսի 20-ից մինչև 2019 թ. օգոստոսի 16-ը, արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ (ԱՋՏ) համակարգերի տեղադրում 2019 թ. հունիսի 21-ից մինչև 2019 թ. օգոստոսի 18-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. հունիսի 20-ից մինչև 2019 թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակի, Լուսաձորի, Դիտավանի, Ակնաղբյուրի և Այգեձորի համայնքներում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային (ON GRID) կայաններ և արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ (ԱՋՏ) համակարգեր: Արժեքը՝ 45.710.203,00 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է արևային ֆոտովոլտային (ON GRID) կայանների և արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ (ԱՋՏ) համակարգերի տեղադրում՝ 45.710.203,00 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ